ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԻՎ/65/2025

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան 14 փետրվարի 2025թ.

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, մասնակցությամբ Հանձնաժողովի անդամներ Մարիամ Գալստյանի (նիստը նախագահող), Արամայիս Փաշինյանի, Արմեն Մարուխյանի և Լիլիթ Ալեքսանյանի (այսուհետ՝ Հանձնաժողով), 2025 թվականի փետրվարի 14-ին քննելով Սյունիքի մարզի Քաջարան համայնքի ղեկավար Մանվել Փարամազյանի ընտանիքի անդամի՝ Լիլիթ Մաքսիմի Դավթյանի նկատմամբ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված զանցանքի հատկանիշներով առերևույթ խախտման կապակցությամբ հարուցված վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ ՎԻՎ/65/2025 գործը՝

ՊԱՐԶԵՑ

I. Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթի նախապատմությունը.

1.1 Հանձնաժողովը, ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 25-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված իրավակարգավորումներով, իրականացրել է Սյունիքի մարզի Քաջարան համայնքի ղեկավար Մանվել Փարամազյանի ընտանիքի անդամ՝ Լիլիթ Դավթյանի

«Պաշտոնատար անձի ընտանիքի անդամի՝ 2023 թվականի գույքի, եկամուտների և ծախսերի» տարեկան հայտարարագրում (այսուհետ նաև՝ Հայտարարագիր) ներկայացված տվյալների արժանահավատության և ամբողջականության ստուգում, որի արդյունքում արձանագրվել է հետևյալը՝Հայտարարագրի «Բ.3 Արժեթղթեր և այլ ներդրումներ» բաժնում չի հայտարարագրել «ԱԺԴԱՆԱԿ» ՍՊ ընկերության բաժնեմասի վերաբերյալ տվյալը:

1.2 Հանձնաժողովը ձեռք բերված և ուսումնասիրված վերը նշված տվյալի հիման վրա արձանագրել է, որ առերևույթ առկա են Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված զանցանքի հատկանիշներ և 2025 թվականի փետրվարի 6-ին Լիլիթ Դավթյանին հասցեագրել է թիվ 01/508/1-2025 գրությունը՝ հրավիրելով Հանձնաժողով վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելուն և գործի քննությանը մասնակցելու: Նշված գրությունը Լիլիթ Դավթյանը ստացել է 2025 թվականի փետրվարի 9-ին:

1.3 2025 թվականի փետրվարի 12-ին պատշաճ ծանուցված Լիլիթ Դավթյանի բացակայությամբ կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ ՎԻՎ 10/25 արձանագրությունը՝ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված առերևույթ իրավախախտման հատկանիշներով:

1.4 Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության տեղի և ժամանակի մասին պատշաճ ծանուցված Լիլիթ Դավթյանի բացակայությամբ 2025 թվականի փետրվարի 14-ին՝ ժամը՝ 11:00-ին, տեղի է ունեցել վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննություն:

II. Վարույթի մասնակցի ներկայացրած դիրքորոշում ու պարզաբանումներ

Վարույթի մասնակից՝ Լիլիթ Դավթյանի 2025 թվականի փետրվարի 7-ին Հանձնաժողովին հասցեագրված գրությամբ ներկայացրել է դիրքորոշում, որի համաձայն՝ ինքը հանդիսանում է «ՏՐԱՄՊ» ՍՊ ընկերության 100% բաժնեմասի սեփականատերը, իսկ «ՏՐԱՄՊ» ՍՊ ընկերությունն իր հերթին՝ «ԱԺԴԱՆԱԿ» ՍՊ ընկերության 40% բաժնեմասի սեփականատերը: Դիրքորոշմամբ միաժամանակ նշել է, որ Հանձնաժողովի կողմից ուղարկված գրությունից պարզ չի դառնում, թե որ իրավական ակտն է հայտարարատուի

համար պարտավորություն սահմանում հայտարարագրելու իր մասնակցությամբ առևտրային կազմակերպության մասնակցությունը մեկ այլ առևտրային կազմակերպությունում, ինչպես նաև պաշտանատար անձի ընտանիքի անդամների գույքի, եկամուտների և ծախսերի տարեկան հայտարարագրի օրինակելի ձևի ուսումնասիրությունը ևս հնարավորություն չի տալիս հանգելու անվերապահ առ այն, որ առկա է մասնակցությունը հայտարարագրելու պահանջ, մասնավորապես, հայտարարագրի «Բ.3. Արժեթղթեր և այլ ներդրումներ» բաժնի ուսումնասիրությունից որևէ կերպ չի հետևում, որ ընկերության շահաբաժին ստանալու իրավունքը պետք է նույնականացվի ֆիզիկական անձի շահաբաժին ստանալու հետ:

Լիլիթ Դավթյանը նաև նշել է, որ Օրենսգրքի 169.28-րդ և 169.31-րդ հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով վարչական տույժը կարող է նշանակվել իրավախախտումը կատարելուց հետո մեկ տարվա ընթացքում, որը ըստ վարույթի մասնակցի՝ բաց է թողնվել:

III. Վարույթի համար էական նշանակություն ունեցող փաստեր

Հանձնաժողովը, ուսումնասիրելով թիվ ՎԻՎ/65/2025 գործում առկա նյութերը, կատարել է հանգամանքների քննություն և հաստատված է համարում, որ՝

3.1 ՀՀ Սյունիքի մարզի Քաջարան համայնքի ավագանու 2022 թվականի նոյեմբերի 14-ի թիվ 02-Ա որոշման համաձայն Մանվել Վրեժիկի Փարամազյանն ընտրվել է համայնքի ղեկավար և համայնքի պաշտոնական կայքէջում առկա տեղեկության համաձայն մինչ օրս հանդիսանում է Քաջարան համայնքի ղեկավար (https://www.kajaran.am/Pages/DocFlow/Default.aspx?a=v&g=0d115bb2-1150-46e7-8eb0-294afae9c4d6):

3.2 ՀՀ ԱՆ ՔԿԱԳ շտեմարանի, ինչպես նաև Հայտարարագրում ներկայացված տվյալների համաձայն՝ Լիլիթ Մաքսիմի Դավթյանը հանդիսանում է հայտարարատու պաշտոնատար անձ Մանվել Փարամազյանի կինը:

3.3 Օրենքի 34-րդ հոդվածով սահմանված կարգավորումների համաձայն՝ հանդիսանում է գույքի, եկամուտների և ծախսերի հայտարարագրման պարտականություն ունեցող անձ:

3.4 ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության տվյալների համաձայն՝ Լիլիթ Դավթյանը 2021 թվականի մայիսի 3-ից հանդիսանում է «ՏՐԱՄՊ» ՍՊ ընկերության 100% բաժնեմասի սեփականատերը, իսկ «ՏՐԱՄՊ» ՍՊ ընկերությունը՝ 2021 թվականի նոյեմբերի 4-ից՝ «ԱԺԴԱՆԱԿ» ՍՊ ընկերության 40% բաժնեմասի սեփականատերը: Պետական եկամուտների կոմիտեի պաշտոնական կայքում առկա տվյալների համաձայն՝ նշված ընկերությունները գործող են, իսկ լուծարման գործընթացում գտնվելու կամ գործունեության (գոյության) դադարման մասին պետական միասնական գրանցամատյանում տեղեկություններ գրառված չեն:

3.5 Հայտարարագրի «Բ.3. Արժեթղթեր և այլ ներդրումներ» բաժնում ներկայացվել է «ՏՐԱՄՊ» ՍՊ ընկերության 100% բաժնեմասի վերաբերյալ տվյալը:

3.6 Հայտարարագրի «Բ.3. Արժեթղթեր և այլ ներդրումներ» բաժնում չի ներկայացվել «ԱԺԴԱՆԱԿ» ՍՊ ընկերության 40% բաժնեմասի վերաբերյալ տվյալը:

IV. Որոշումն ընդունելու իրավական հիմքերը և հիմնավորումները.

4.1 Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն օրենքի իմաստով հայտարարատու պաշտոնատար անձինք են (...) համայնքների ղեկավարների (...) պաշտոն զբաղեցնող անձինք:

4.2 Օրենքի 34-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի չափահաս անդամները համարվում են հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձ և հայտարարատու պաշտոնատար անձի հայտարարագրում լրացնում են իրենց գույքի, եկամուտների և ծախսերի վերաբերյալ տվյալները, պատասխանատու են դրանց իսկության համար:

4.3 Նույն հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի անդամներն (ընտանիքի կազմի մեջ մտնող անձինք) են նրա ամուսինը, անչափահաս զավակը (այդ թվում՝ որդեգրված), հայտարարատու պաշտոնատար անձի խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձը, հայտարարատու պաշտոնատար անձի հետ համատեղ բնակվող յուրաքանչյուր չափահաս անձ:

4.4 Օրենքի 40-րդ հոդվածի (Գույքի հայտարարագրի բովանդակությունը) 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ Հայտարարագիրը ներառում է հայտարարատուին սեփականության իրավունքով պատկանող՝ բաժնային արժեթղթերը, այլ ներդրումը հավաստող փաստաթղթերը (բաժնետոմսը, բաժնեմասը, փայաբաժինը), ինչպես նաև պարտքային արժեթղթերը (պարտատոմսը, չեկը, մուրհակը և Հայաստանի Հանրապետության օրենքներով արժեթղթերի թվին դասվող այլ փաստաթուղթ, բացառությամբ բանկային վկայագրի):

4.5 Նույն հոդվածի 1.1-ին մասի համաձայն՝ հայտարարագրում ներառվում է նաև հայտարարատուի կողմից փաստացի տիրապետվող գույքը, ինչպես նաև այն գույքը, որը սեփականության իրավունքով պատկանում է երրորդ անձի, բայց ձեռք է բերվել հայտարարատուի անունից, օգտին կամ հաշվին, կամ այդ գույքից փաստացի օգուտ է ստանում կամ այդ գույքը տնօրինում է հայտարարատուն:

4.6 «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 169.28-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ հայտարարատուի կողմից հայտարարագրում **անզգուշությամբ սխալ կամ ոչ ամբողջական տվյալ** ներկայացնելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով:

4.7 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով՝ հաշվի առնելով սույն օրենքով սահմանված առանձնահատկությունները:

4.8 «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ **առանձին տեսակի վարչական վարույթների առանձնահատկությունները** սահմանվում են օրենքներով և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով:

4.9 «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

4.10 Օրենսգրքի 252-րդ հոդվածի համաձայն՝ մարմինն ապացույցները գնահատում է իր ներքին համոզմունքով, որը հիմնված է գործի՝ իրենց ամբողջությամբ վերցված բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա, ղեկավարվելով օրենքով և իրավագիտակցությամբ:

4.11 Օրենսգրքի 244.17-րդ հոդվածի համաձայն՝ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննում և վարչական տույժեր է նշանակում Հանձնաժողովը:

4.12 «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքով 247-րդ հոդվածով սահմանված իրավանորմի համաձայն՝ *<u>վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը չի կարող սկսվել, իսկ սկսվածը ենթակա է կարճման</u>* նույն հոդվածի 1-ին կետով սահամված հանգամանքների դեպքում, այն է՝ ***վարչական իրավախախտման դեպքի*** կամ կազմի ***բացակայությունը***:

4.13 Օրենսգրքի 282-րդ հոդվածի համաձայն՝ քննելով վարչական իրավախախտման վերաբերյալ գործը, մարմինը (պաշտոնատար անձը) ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝ 1) վարչական տույժ նշանակելու մասին, 2) գործի վարույթը կարճելու մասին:

4.14 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովը Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի արդյունքում ընդունում է որոշումներ, որոնք կարող են բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան՝ դատական կարգով:

Սույն գործով հաստատված փաստական հանգամանքների նկատմամբ կիրառելի իրավական նորմերի վերլուծության արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է.

Հանձնաժողովը, համադրելով գործում առկա փաստական հանգամանքները, դրանց նկատմամբ կիրառելի իրավական նորմերի պահանջների հետ, հաստատված է համարում, որ իրավախախտման դեպքը բացակայում է հետևյալ պատճառաբանությամբ.

Լիլիթ Դավթյանը հանդիսանում է «ՏՐԱՄՊ» ՍՊ ընկերության 100% բաժնեմասի սեփականատեր: Իր հերթին «ՏՐԱՄՊ» ՍՊ ընկերությունը հանդիսանում է «ԱԺԴԱՆԱԿ» ՍՊ ընկերության 40% բաժնեմասի սեփականատեր: Նշվածից հետևում է, որ Լիլիթ Դավթյանն անուղղակի մասնակցություն («ՏՐԱՄՊ» ՍՊ ընկերության միջոցով) ունի «ԱԺԴԱՆԱԿ» ՍՊ ընկերությունում և այդ ընկերությունից փաստացի օգուտ կարող է ստանալ միայն «ՏՐԱՄՊ» ՍՊ ընկերության միջոցով, հետևաբար Հանձնաժողովը գտնում է, որ Հայտարարագրի «Բ.3. Արժեթղթեր և այլ ներդրումներ» բաժնում Լիլիթ Դավթյանի կողմից «ՏՐԱՄՊ» ՍՊ ընկերության սեփականության իրավունքով 100% բաժնեմաս ունենալու վերաբերյալ տվյալը հայտարարագրելը բավարար է Լիլիթ Դավթյանի գույքային դրությունը բացահայտելու համար և նման պայմաններում «ԱԺԴԱՆԱԿ» ՍՊ ընկերությունում անուղղակի մասնակցություն ունենալու մասին տվյալը հայտարարագրելու անհրաժեշտություն առկա չէ: Հանձնաժողովը արձանագրում է նաև, որ Լիլիթ Դավթյանի կողմից Հայտարարագրում «ՏՐԱՄՊ» ՍՊ ընկերությունում 100% բաժնեմասնակցություն ունենալու վերաբերյալ տվյալը հայտարարագրելը հնարավորություն է տվել ամբողջական պատկերացում կազմել վերջինիս՝ որպես հայտարարատու անձի գույքային դրության մասին, դրանով իսկ ապահովելով պետական պաշտոն զբաղեցնող անձի ընտանիքի անդամի հանրային հաշվետվողականությունը, վերջինիս հանրային գործունեության նկատմամբ վստահությունը, պետական պաշտոն զբաղեցնող անձի ընտանիքի անդամի գործունեության թափանցիկությունը և հնարավոր կոռուպցիոն դրսևորումների բացահայտումն ու դրանց նկատմամբ հանրային վերահսկողությունը:

Անդրադառնալով Լիլիթ Դավթյան կողմից ներկայացված դիրքորոշմանը, որի համաձայն՝ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտման վերաբերյալ գործով վարչական տույժը կարող է նշանակվել իրավախախտումը կատարելուց հետո մեկ տարվա ընթացքում, որն ըստ վարույթի մասնակցի՝ բաց է թողնվել, Հանձնաժողովն արձանագրում է, որ Օրենսգրքի 37-րդ հոդվածի կարգավորումների

համաձայն՝ վերոնշյալ նորմով սահմանված վարչական տույժը նշանակվում է իրավախախտումը կատարելու օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում: Տվյալ դեպքում իրավախախտումը կատարելու օրն է համարվում Հայտարարագրի ներկայացման օրը՝ 2024 թվականի մայիսի 30-ը, ուստի վարույթի մասնակցի վկայակոչված փաստարկն անհիմն է::

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով,Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 247-րդ հոդվածով, Հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. 2025 թվականի փետրվարի 5-ին հարուցված վարչական իրավախախտումների վերաբերյալ ՎԻՎ/65/2025 գործի վարույթը կարճել՝ իրավախախտման դեպքի բացակայության հիմքով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Լիլիթ Մաքսիմի Դավթյանին այն սահմանված կարգով հանձնելու (հանձնված համարվելու) հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝

ՄԱՐԻԱՄ ԳԱԼՍՏՅԱՆ